Հավելված 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Անհիշելի ժամանաներից ի վեր հայ ժողովուրդն իր բնօրրանում ստեղծել է նյութական մշակույթի անհամրելի թվով հուշարձաններ, որոնց մեծագույն մասը, ցավոք, պատմական տարբեր դեպքերի անբարենպաստ զարգացումների արդյունքում հայտնվել է Հայաստանի Հանրապետությանը հարևանակցող պետությունների՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Իրանի, Վրաստանի սահմաններում: Հարկ է նշել նաև, որ արարող հայ մարդու ստեղծած հարյուր հազարավոր հուշարձաններ կան նաև գաղթավայրերում:

Հատկանշելի է, որ քաղաքակիրթ պետություններն իրենց տարածքում գտնվող այլ ժողովուրդների մշակութային արժեքները դիտարկում են որպես սեփական երկրի հարստություն և վերցնում իրենց հոգածության ներքո:

Քննվող խնդրի պարագայում ասվածը լավագույնս վերաբերվում է հարևան Իրանի Իսլամական Հանրապետության և աշխարհով մեկ սփռված հայկական գաղթօջախներում (Հնդկաստան, Դաղստան, Իտալիա, Ռումինիա, Լեհաստան, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Ամերիկա և այլուր, մի խոսքով՝ Սփյուռք) գտնվող հայկական հուշարձաններին, որոնք պահպանվում են լավ վիճակում, վտանգված չեն և որևէ ոտնձգության չեն ենթարկվում, այսինքն՝ ինչ ստեղծել են հայերը՝ հիմնականում պահպանվում են և պետության հոգածության ներքո են: Օրինակ, Իրանում պարբերաբար իրականացվում են ուսումնասիրական, վերականգնողական կամ ամրակայման աշխատանքներ: Բացի այդ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում են ընդգրկված Սբ. Թադեոս առաքյալ, Սբ. Ստեփանոս նախավկա (Մաղարդավանք) վանքերը և Ծործորի Սբ. Աստվածածին եկեղեցին:

Աշխարհի տարբեր անկյուններում կան հայկական պատմամշակութային ժառանգության մի շարք այլ նմուշներ, որոնք ամբողջական կամ մասնակի հոգածության ներքո են գտնվում: Օրինակ, Մատենադարանից հետո աշխարհի ամենամեծ հայկական ձեռագրատունը գտնվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում: Այնտեղ պահվում է 4000-ից ավել հայերեն ձեռագիր: Իսկ Հին Երուսաղեմի հայկական թաղամասում գտնվում է Հայոց Պատրիարքությունը, որին կից, ինչպես նաև թաղամասի այլ հատվածներում կան հայկական բազմաթիվ հաստատություններ: Այս և այլ պատմամշակութային արժեքները տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակում տարբեր ժամանակներում

ստացել են որոշակի հոգածություն՝ ուշադրության արժանանալով տեղի և/կամ այլ համայնքների հայերի, քաղաքային իշխանությունների և այլ մարմինների կողմից:

Ցավոք, նույնը չենք կարող ասել Թուրքիայի և Ադրբեջանի համար, որոնց սահմաններում հայտնված նյութական մշակույթի հայկական հուշարձանները (գլխավորապես քրիստոնեական հուշարձանները՝ վանք, եկեղեցի, գերեզմանոց, հայերեն արձանագրություն) ենթարկվում են խտրական և անհանդուրժողական վերաբերմունքի, դիտարկվում են որպես պատմական իրականությունը մատնող կռվաններ և ամեն կերպ, այդ թվում վանդալական գործողություններով փորձում են ձերբազատվել դրանցից: Օրինակ, փաստացի հայ մշակույթի՝ հատկապես քրիստոնեական ժառանգությունից արդեն իսպառ զրկվել է ողջ Նախիջևանը: Այստեղ հիմնովին ոչնչացվել են 218 վանք ու եկեղեցի, հարյուրավոր հայկական գերեզմանոցներ իրենց հազարավոր գերեզմանական հուշարձաներով: Միայն Ջուղա քաղաքում կար շուրջ 15 000 խաչքար: Դրանց մեծ մասն արդեն ավերվել ու վերացվել է:

20-րդ դարի սկզբին Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունն Օսմանյան կայսրության տարածքում ունեցել է 1181 եկեղեցի և 132 վանք: Այսօր մնացել է ընդամենը 43 եկեղեցի: Համաշխարհային քաղաքակրթության մշակութային գանձարանն անդառնալի կորուստ կրեց Հին Ջուղայի աշխարհահռչակ գերեզմանոցի ոչնչացումով: Ստեղծված իրավիճակում հայկական կողմին կարծես վերապահված է միայն կատարվածի արձանագրումը և ահազանգումը:

Վերջին տարիներին այն հակահայ ալիքը, որի պատճառով Վրաստանում զոհ գնացին (ավերվեցին կամ յուրացվեցին) հայկական բազմաթիվ հուշարձաններ, սկսած մայրաքաղաքից մինչև շրջաններ, բարեբախտաբար թուլացել է: Պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Ջավախք գավառում հայկական հուշարձանները հիմնականում գտնվում են լավ վիճակում, չհաշված առանձին դեպքերի: Ջավախաբնակ հայերի կողմից իրականացվում են նաև քայքայված եկեղեցիների քանդման ու վերակառուցման աշխատանքներ:

Կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական պատմամշակութային ժառանգությունը, բացի մշակութասպան Թուրքիայից և Ադրբեջանից, կառավարության անմիջական հոգածության ներքո է գտնվում Իրանում և հայկական մի շարք գաղթավայրերում:

Փաստաթուղթը պատրաստվել է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի կողմից տրամադրված նյութերի հիման վրա: